https://doi.org/ 10.59821/18294219-2025.2-qet11

Արթուր Ղարագյոզյան
Արդարադատության ակադեմիայի շրջանավարտ,
ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիր

ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐԸ[1]

Համառոտագիր

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առկա է քրեական ենթամշակույթի բարձր աստիճան, ի տարբերություն նախկին՝ 01.08.2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքի կարգավորումներին, որտեղ բացակայում է քրեական ենթամշակույթին վերաբերող արարքների քրեականացման հոդվածները, 01.07.2022 թվականին ընդունված և գործող քրեական օրենսգիրքը նախատեսել է 4 հոդված, որոնք նախատեսում են քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր (322-325 հոդվածներ):Ակնհայտ է օրենսդրի այն մոտեցումը, որ քրեական ենթամշակույթը և դրա անկառավարելի տարածումը հանդիսանում են հանրային բարձր վտանգավորություն կրող երևույթներ և դրանց դեմ պետք է նախատեսվի նաև օրենսդրական–նորմատիվային պայքար: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ միայն քրեաիրավական արգելքներ սահմանելը բավական չէ, որպեսզի քրեական օրենքը կարողանա իրացնել իր կանխարգելիչ (պրևենտիվ) գործառույթը: Քրեական ենթամշակույթը ունի լատենտայնության մեծ աստիճան, քանի որ մարդիկ խուսափում են դրա եղելության մասին հայտնել իրավապահ մարմիններին, այդ լռությունը ունի բազմաթիվ պատճառներ, բայց ավելի կայուն պատճառը դա սեփական անձի անվտանգությունն է առ այն, որ իրավապահ մարմիններ ահազանգող անձը կարող է խնդիրներ ունենալ այդ աշխարհի մարդկանց հետ: Առավել վտանգավոր երևույթ է քրեական ենթամշակույթի անկառավարելի տարածումը, աճը, դրա քարոզը:

Աշխատանքի նպատակն է համակարգային վերլուծության ենթարկել քրեական ենթամշակույթի սոցիալական ֆենոմենը, վեր հանել քննարկվող ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև ներկայացնել Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքով սահմանված քրեական ենթամշակույթին վերաբերող հանցակազմերը և հանդես գալ նոր առաջարկություններով, ուսումնասիրել և վեր հանել քրեական ենթամշակույթի դեմ պայքարի միջոցները, ինպես առանձին–առանձին, այնպես էլ կոմպլեքսային միջոցներով և հանդես գալ նոր արդյունավետ առաջարկություններով:

[1] Հոդվածը ներկայացվել է 30.09.2024թ., գրախոսվել է 16.05.2025թ.:

Հիմնաբառեր- քրեական ենթամշակույթ, քարոզ, կանխարգելում, գործունեություն, կոմպլեքսային պայքար, նորմատիվիստական պայքար:

Ներածություն

Քրեական ենթամշակույթը հանդիսանում է բարդ և բազմապիսի սոցիալական երևույթ, որի անկառավարելի տարածումը և աճը բացասական է անդրադառնում երկրի և հասարակության կայունության համար, այն ունի հանրային բարձր վտանգավորություն: Այն բարձրացնում է հանցավորության աստիճանը և վտանգ է հանդիսանում հասարակության և ընդհանրապես բնակչության անվտանգության համար, իսկ դրա անկառավարելի տարածումը բացասական հետևանք է ունենում երիտասարդության համար, դեռևս կայացման փուլում, կյանքի փորձ չունեցող երիտասարդների համար այն դառնում է թանձր շղարշ և հասարակության այդ զանգվածը ընտրում է կյանքի հանցավոր ուղի: Այդ երևույթի տարածման և անկառավարելի աճի պատճառների ընկալումը և դրա դեմ արդյունավետ պայքարի համար մեթոդներ մշակելը հանդիսանում է արդիական խնդիր, ինչպես հանրային մարմինների, հատկապես՝ իրավապահ, այնպես էլ՝ հասարակության համար:

Վերը նշված դիտարկումների և փաստարկների լույսի ներքո կարող ենք նշել, որ աշխատանքի ուսումնասիրման տեսական և գործնական նշանակությունը, դրա ուսումնասիրության արդիականությունը, միանշանակ պայմանավորված են վերոնշյալ դիտարկումներով:

Բացի այդ 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով, նախատեսվել են նոր իրավակարգավորումներ, որոնք վերաբերում են քրեական ենթամշակույթին վերաբերող որակական և քանակական հատկանիշներով տարբերվող նոր հանցակազմերին:

Աշխատանքի ուսումնասիրության նպատակը և խնդիրները.

Սույն աշխատանքի ուսումնասիրության նպատակն է վերլուծության ենթարկել քրեական ենթամշակույթը որպես սոցիալական ֆենոմեն:Վերլուծել քրեական ենթամշակույթի ծագման պատճառները, քրեական ենթամշակույթի դեմ պայքարի միջոցները, դրանք համադրել ժամանակակից մարտահրավերների հետ, ինպես նաև ներկայացնել նոր առաջարկներ և լուծումներ, որոնց գործադրումը կլինի արդյունավետ գործիք քրեական ենթամշակույթի տարածման դեմ պայքարում:

Վերը նշված նպատակի կենսագործմամբ էլ պայմանավորված են սույն հետազոտության ներքոնշյալ խնդիրները.

1.Ուսումնասիրել և ներկայացնել քրեական ենթամշակույթի՝ որպես սոցիալական ֆենոմենի ընդհանուր բնութագիրը:

2.Ուսումնասիրել և վերլուծության ենթարկել քրեական ենթամշակույթի առաջացման պատճառները:

3.Հետազոտել և վերլուծության ենթարկել քրեական ենթամշակույթի տարածման և անկառավարելի աճի դեմ պայքարի միջոցները:

4.Հետազոտել և նոր առաջարկեր ներկայացնել քրեական ենթամշակույթի տարածման դեմ պայքարի ժամանակակից միջոցների մասին:

Գլուխ 1. Քրեական ենթամշակույթի հասկացությունը և տարրերը: Քրեական մշակույթը՝ որպես սոցիալական ֆենոմեն

Քրեական ենթամշակույթը իրենից ներկայացնում է հասարակության մեջ յուրահատուկ տեղ զբաղեցնող սոցիալական երևույթ, որն իր մեջ ունի մի շարք հատկանիշներ և տարրեր, որոնք հանդիսանում են տարբերակիչ հիմք քրեական ենթամշակույթի և այլ տեսակի սոցիալական կազմավորումների միջև, դրանք ծագում, փոփոխվում և զարգանում են երկարաժամկետ ընթացքում, որը ենթադրում է քրեական ենթամշակույթի մասնակիցների և անդամների միջև փոխգործողությունների շղթա՝ ուղղված խմբի կամ խմբերի ներքին աստիճանակարգության, կենսափիլիսոփայության, արժեքային համակարգի և այլ նորմերի ամրապնդմանը և կայունացմանը, որոնք չեն համընկում պետության և հասարակության կողմից հաստատված իրավահպատակ վարքագծի ընդհանուր համապարտադիր կանոններին: Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Իվանովիչ Գուրովը շատ դիտուկ կարծիք է հայտնել, որ պրոֆեսիոնալ հանցագործներին ներհատուկ է քրեական որակավորում և մասնագիտացում, քրեական միջավայրի բարքերի և սովորույթների պահպանում, հանցավոր գործունեության մեթոդների և հնարքների կատարելագործում[2]: Իրավաբան գիտնականներ Դանիիլ Կորեցկին և Վադիմ Տուլեգենովը քրեական ենթամշակույթը որակել են որպես ոչ սոցիալական արժեքների, սովորույթների, ավանդույթների, նորմերի և վարքագծի կանոնների ամբողջությունը ուղղված հակաօրինական (քրեական) ներկայով կամ անցյալով ապրող անձանց կենսագործունեության կազմակերպմանը՝ նպատակ հետապնդելով կատարել, պարտակել հանցանքը կամ խուսափել քրեական պատասխանատվությունից[3]: Քրեական ենթամշակույթը որպես հասարակական մատերիա՝ ունի իր հատկանիշները, որոնք արտահայատում են դրա ամբողջությունը և գոյությունը: Քրեական ենթամշակույթի գաղափարական և արժեքային համակարգերը ունեն հակասոցիալական և հակաօրինական հիմքեր, գլխավոր գաղափարը դա օրենքի գերակայության և նորմատիվ–իրավական կարգադրագրերի հանդեպ անվստահությունն է և հակակրանքը: Քրեական ենթամշակույթ կրող միջավայրը խրախուսում է արգելող կամ պահպանող իրավական նորմերի խախտումը, դրանք համարելով՝ որպես պետության կողմից ստեղծված տոտալ ղեկավարման գործիքակազմ, որը կարելի է, և պետք է շրջանցել: Տվյալ միջավայրում իրավական պետության գաղափարը տեղ չունի, քանի որ օրենքը ինքնին համարվում է սխալ: Տեղին է հիշատակել, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոկտոր, պրոֆեսոր Արթուր Ղամբարյանի դիրքո-

[2] Տե՛ս Гуров А. И. Профессиональная преступность: прошлое и современность–Москва.,1990. – էջ 24:

[3] Տե՛ս Корецкий Д. А. Криминальная субкультура и ее криминологическое значение / Д. А. Корецкий, В. В. Тулегенов. – Санкт-Петербург:Юридический центр Пресс, 2006. – էջ 17:

որոշումը իրավական պետության մասին, որ իրավական պետությունը պետական իշխանության կազմակերպման և գործունեության այնպիսի ձև է, որտեղ երաշխավորվում է իրավունքի գերակայությունը, ճանաչվում և պահպանվում են մարդու իրավունքներն ու ազատությունները, իսկ իշխանության կազմակերպման հիմքում ընկած է իշխանությունների բաժանման սկզբունքը[4]: Այդպիսի գաղափարների առկայությունը էքսպլիցիտ (ուղղակի) առումով տանում են դեպի իրավունքի ժխտողականության տարածմանը և հետևաբար իրավական պետության մարմանը, տեղին է հիշատակման իրավաբանական գիտություններ թեկնածու Ալինա Փխրիկյանի արտահայտած դիրքորոշումը իրավունքի ժխտողականության (նիհիլիզմի) մասին, այն է՝ իրավական նիհիլիզմը այնպիսի բացասական զգացմունքների, պատկերացումների, տրամադրությունների, ապրումների, հույզերի համակցություն է, որով ժխտվում է իրավունքը և հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը[5]: Գաղափարական աշխարի և արժեքների մեջ հենասյունային տեղ է զբաղեցնում խմբավորման հավատարմությունը միմյանց նկատմամբ և ներհատուկ հասկացութային ապարատ՝ հասկացությունների ամբողջություն (պանյատներ), դրանց խախտումը կամ սահմանազանցումը պարսավելի արարք է և ենթակա է պատժիչ ներգործության: Իրավաբանական գիտությունների թեկնածու Օ. Պ. Դուբյագինան խոսում է քրեական ենթամշակույթի մասին, որպես մարդկանց ապրելակերպի, վարքագծի ձև ընդունված քրեածին միջավայրում[6]:

Քրեական ենթամշակույթը բնութագրվում է հստակ սոցիալական կառուցվածքով և աստիճանակարգով, որը որոշակիացվում է մանսակիցների կարգավիճակով և դերակատարումով: Քրեական միջավայրում գոյություն ունի խիստ աստիճանակարգություն ՝ հիմնված հեղինակության աստիճանով և հանրօգուտ արարքներով: Ղեկավարները զբաղեցնում են բարձր դիրքեր և ընդունում են վճռորոշ որոշումներ և կառավարում են այլ մասնակիցների գործունեությունը: Քրեական ենթամշակույք կրող միջավայրում խմբի յուրաքանչյուր մասնակցին տրվում է առանձին դեր, որը կարող է ներառել տարբեր հանցավոր հանձնարարություններ, օրինակ՝ տեղեկատվության հավաքում, հետապնդումներ, տարբեր տարածքների պահպանություն և այլն: Վ.Վ.Տուլեգենովը իր գիտական հոդվածում գրում է, որ քրեաբանական գիտության տեսանկյունից ենթամշակույթը կառուցվածքային և գործառութային կազմավորում է, որի մասնակիցները տարբերվում են հասարակության ընդհանուր մասսայից[7]: Քրեական ենթամշակույթի առանձնահատուկ տարր է համարվում նրա լեզուն և սիմվոլիստիկան (ավելի ակնառու է նրանց

[4] Տե՛ս Ա.Ղամբարյան, Մ.Մուրադյան. Պետության և իրավունքի տեսություն, Երևան, <<Լուսաբաց>> հրտ. 2023, 143 էջ:

[5] Տե՛ս Ա.Ղամբարյան, Մ.Մուրադյան. Պետության և իրավունքի տեսություն, Երևան, <<Լուսաբաց>> հրտ. 2023թ.202 էջ:

[6] Տե՛ս Дубягина О. П. Криминологическая характеристика норм, обычаев и средств коммуникации криминальной среды : монография / Мосва: Юрлитинформ, 2008г., 10 էջ:

[7] В. В. Тулегенов.. Криминальная субкультура: Понятие, структура и соотношение со смежиними понятиями:статья/Астрахан/ Астраханский государственный технический университет, 2 էջ:

դաջվածքաբանությունը և դրա հիման վրա կառուցված փիլիսոփայությունը), որը ներհատուկ է այդ խմբավորման կամ դրան առնչվող անձանց: Կարելի է պնդել, որ խոսակցական առանձնահատկությունները և սիմվոլիստիկան քրեական ենթամշակույթ խմբավորում կրող անձանց նույնականացման և միմյանց հետ շփման մեթոդն է: Սակայն, ոչ միշտ է, որ քրեական ենթամշակույթ կրող անձինք օգտագործում են իրենց խոսակցական առանձնահատկությունները: Ռ. Մուսայելյանը, Ա. Հայրապետյանը անդրադարձել են և նշել, որ լեզվի բառերի տարբերակման մեջ որոշակիորեն պետք է զանազանել որակապես իրարից խիստ տարբերվող երկու երևույթ՝ մասնագիտական տարբերակում և դասակարգային տարբերակում: Այս երկու կարգի տարբերակումներից որակապես տարբերվում է բառերի դասակարգային տարբերակումը: Այսպիսի տարբերակումը հասարակության մեջ որոշ խմբերի հասարակությունից մեկուսանալու արդյունք է: Քրեական աշխարհի ժարգոնը առաջացել է գողական ենթամշակույթի ձևավորման շրջանում: Այն իրենից ներկայացնում է տերմինների և արտահայտությունների մի համակարգ, որը հակադրված է օրինապահ հանրությանը[8]: Քրեական ենքամշակույթի խոսակցական ամբողջությունը կոչվում է (արգո և ժարգո): Դաջվածքները և այլ նշանները կարևոր դեր են խաղում մարդկանց քրեական խմբի և նրանց դերի նույնականացման համար: Նրանք իրենց մեջ պարունակում են տեղեկատվություն քրեական արժանիքների (զասլուգներ) և որոշակի խմբի պատկանելության մասին: Քրեական ենթամշակույթը իր մեջ ներառում է մի շարք արարողություններ և ծեսեր, որոնք ամրապնդում են խմբի միասնությունը և հաստատում են դրա մասնակիցների ստատուսը: Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կ. Ա. Բիշարյանը իր գիտագործական մեկնաբանություններում անդրադարձել է քրեական ենթամշակույթի բարձրագույն աստիճանակարգություն ստանալու գործընթացին, այն է՝ Թբիլիսիի քաղաքային դատարանի 13.10.2006 թվականի 1/6244–06 գործով դատավճիռը Վրասատանի քաղաքացի Զաքարիա Քալաշովը (Շաքրո մալադոյ) ճանաչվել է որպես օրենքով գող նախկին օրենքով գող Ավդո Միրզոևի կողմից՝ գողերի հավաքի (սխոդկայի) ժամանակ Թբիլիսի քաղաքում[9]: Աշլարբան ընդդեմ Վրանստանի գործով ՄԻԵԴ՝ 2014 թվականի հուլիսի 15–ի վճռի 23–րդ կետը, որում ՄԻԵԴ–ը հաստատել է, որ օրենքով գողի տիտղոսը սովորաբար շնորհվում է հանցագործին ավագ օրենքով գողի կողմից հանցավոր ծեսի միջոցով, որը հայտնի է որպես մկրտություն[10]: Վերը թվարկված հատկանիշների և հատկությունների ընդհանուր և բազմակողմանի վերլուծություններից գալիս ենք այն եզրակացության, որ քրեական ենթամշակույթը հանդիսանում է բարդ սոցիալական ֆենոմեն, որը ունի իր յուրահատուկ տարրերը և

[8] Տե՛ս Ռ.Մուսայելյան, Ա.Հայրապետյան. Քրեական աշխարհի ժարգոն և դաջվածքներ. Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2015թ., 5 էջ:

[9] Տե՛ս Կ.Ա.Բիշարյան, Ս.Վ.Առաքելյան, Ա.Հ.Գաբուզյան. ՀՀ Արդարադատության ակադեմիա:Քրեական ենթամշակույթին առնվող արարքների քրեաիրավական բնութագիրը, Երևան, 8 էջ:

[10] Տե՛ս ՄԻԵԴ Աշլարբան ընդդեմ Վրանստանի գանգատ՝ 45554/08:

հատկանիշները: Այն ծագում, զարգանում և փոփոխվում է հասարակության մարգինալիզացիայի (նեգատիվ ծայրահեղականություն), ոչ կայուն տնտեսական վիճակից և սոցիալական մեկուսացումից, որը տվյալ մարդկանց մոտ առաջացնում է այլընտրանքային նորմատիվիստական ապրելակերպ և արժեքային համակարգ, որը ոչ միայն տարբերվում է առողջ, իրավական և սոցիալական պետության մեջ ընդունված սոցիալական նորմերի համակարգին, այլև ուղղահայաց պրիզմայով հակադրվում է դրանց: Քրեական ենթամշակույթի տարրերի և հատկանիշների իմացությունը և ճանաչումը, թույլ է տալիս դրանց դեմ պայքարի համար մշակել արդյունավետ ռազմավարություն:

Գլուխ 2. Քրեական ենթամշակույթի առաջացման պատճառները

2.1. Քրեական ենթամշակույթի ծագման գործոնները

Քրեական ենթամշակույթի առաջացման պատճառները հանդիսանում են բազմագործոն ասպեկտներ՝ կապված բազմապիսի սոցիալական, տնտեսական, մշակութային և հոգեբանական գործոնների հետ: Այսինքն՝ այս գործոնները միմյանց փոխկապակցված են, ավելին դրանք գտնվում են դիալեկտիկական կապի մեջ: Քրեական ենթամշակույթը կազմավորվում է յուրահատուկ պայմանների եղելությամբ, որոնք օժանդակում են համընդհանուր ճանաչում ստացած սոցիալական նորմերի մերժմանը: Հոգեբենական գիտությունների դոկտոր, Վ.Ֆ.Պրիոժկովը անդրադարձել է դրանց առաջացման պատճառներին՝ նշելով, որ քրեական ենթամշակույթը, ինչպես և հանցավորությունը ունեն բազմաթիվ պատճառներ: Դրանց առաջացման և գործունեության հետ կապված ամբողջական և հստակ պատճառներ, պայմաններ գոյություն չունեն: Մեր կարծիքով չի կարելի քրեական ենթամշակույթի առաջացման պատճառներին անդրադառնալ, որպես միակ գլխավոր պատճառ կամ պատճառների խումբ, որոնք իրար հետ կապ չունեն: Հարցին պետք է մոտենալ կոմպլեքսային, պետք է փնտրել բազմաստիճան պատճառների և պայմանների համակարգ, որոնք գտնվում են անընդհատ դինամիկայի մեջ և կազմում են որոշակի համակարգ, գլխավոր և երկրորդական, ուղղակի և անուղղակի, ներքին և արտաքին[11]:

2.2. Սոցիալ–տնտեսական և ինստիտուցիոնալ պատճառներ

Քրեական ենթամշակույթի առաջացման պատճառներից կարելի է ընդգծել սոցիալական անարդարությունը, աղքատությունը, կրթություն ստանալու, աշխատանք ձեռք բերելու և ռեսուրսներից օգտվելու հնարավորության բացակայությունը, կարող է բերել անելանելիության և ինքնավտարման, որը մարդկանց մոտ առաջացնում է կենսական բավարարում ստանալու այլընտրանքային (հակաօրինական) ճանապարհներ փնտրելու ցանկություն: Կրթության ցածր աստիճանը սահմանափակում է օրինական կարիերա ստեղծելու հնարավորությունը, որպիսի

[11] Տե՛ս Пирожков В.Ф. Законы преступного мира молодежи. (криминальная субкультура) Тверь, 1994. էջ 47:

պայմաններում երիտասարդ անձի մոտ միակ, արագ և հեշտ ճանապարհը մնում է հարել քրեական ենթամշակույթին: Ընտանեկան շրջանականը ևս հանդիսանում է քրեական ենթամշակույթի առաջացման ինքուրույն պատճառ, ընտանիք հասկացությունը այս դեպքում դիտվում է որպես լայն ազգակցական միություն, եթե ազգակիցներից, որևէ մեկը հարում է քրեական ենթամշակույթին, ապա դա անուղղակի կերպով դառնում է ընտանիքի երիտասարդ սերնդի ներկայացուցչի ներգրավման հիմք: Կարևոր սոցիալ–տնտեսական պատճառ է գործազրկությունը և հեռանկարների բացակայությունը, նամանավանդ երիտասարդների շրջանում ստեղծում է բարենպաստ պայմաններ քրեական ենթամշակույթի համար: Գործազրկության և հեռանկարների բացակայությունը մարդկանց տանում է դեպի հանցավոր ճանապարհ, քանի որ նրանք փնտրում են այլընտրանքային ճանապարհ իրենց կենցաղային հարցերը բավարարելու համար: Սոցիալական պատճառներից կարևոր է սոցիալական իզոլացիան և սեգրեգացիան, շատ հատկանշական է գետոիզացիայի գործոնը, որը իրենից ենթադրում է որոշակի բնակչության խմբի միմյանց հետ բնակվելու և ապրելու ընթացքը, միացումը կարող է լինել տարբեր հատկանիշների հիման վրա օրինակ՝ ազգային, էթնիկ, սոցիալական, գաղափարական և այլն: Մարդիկ, ովքեր բնակվում են մեկուսացված կամ մարգինալացված հանրության մեջ, հաճախ հայտնվում են պետական վերահսկողությունից դուրս, որը նրանց դարձնում է ավելի խոցելի քրեական ենթամշակույթի տարածման համար: Այս պայմաններում քրեական ենթամշակույթը կարող է դառնալ դոմինանտ կենսակերպ, կդառնա ինքնասնվող և ինքնազարգացող օրգանիզմ, իր սեփական նորմատիվ կարգադրագրերով և նորմերով: Քրեական ենթամշակույթի առաջացման, թերևս ամենակարևոր գործոնը դա հոգեբանականն է, քանի որ քրեական ենթամշակույթի առկայությունը կամ դրա բացակայությունը երևում և արտահայտվում է մարդու կամ մարդկանց արարքներով, իսկ արարքը վարքագծի դրսևորման ակտ է, որը ունի իր առաջացման պատճառը, իր սուբյեկտիվ նախահիմքը: ԱՄՆ–ի, Ալլիանտի միջազգային համալսարանը (Allian International University) իր հետազոտություններում անդրադարձել է երկարատև հանցավոր վարքի ծագման պատճառներին՝ նշելով, որ դրա կարևորագույն արմատական պատճառը՝ մարդու հոգեբանական աշխարհն է, նրա գիտակցական և կամային հատկանիշները[12]: Մասնավորապես որոշակի անձանց մոտ կարող են լինել հոգեբանական ուղղվածություններ բռնության և հակասոցիալական վարքի հանդեպ, որը կարող է ամրապնդվել և արագացվել արտաքին գործոններից: Դրանից զատ, անձի կայացման ընթացքում առաջ է գալիս ինքնահիրացման և հասարակության մեջ իր տեղը գտնելու պահը, այդ ժամանակ ինքնահիրացվող անձը պետք է գտնի իր զբաղմունքը, որը կարող է դառնալ քրեական ենթամշակույթ կրող անձանց համար կամ նրանց հետ, որևէ գործունեությամբ տարվելը, որպիսի պայմաններում անձը ստանում է որոշակիության և պատկանելիության զգացում, սեփական անձի նկատմամբ վստահություն և ճանաչում, այսպես կոչված «հեղինակություն»:

[12] Տե՛ս Official web page of Alliant University https://www.alliant.edu/blog/why-do-people-commit-crimes.

Շատ մեծ է պատիժ կատարող հիմնարկներում, ազատության սահմանափակման հետ կապված պատիժ կրողների, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում, տարբեր անվտանգային գոտիներում ազատարկված անձանց շրջանակում քրեական ենթամշակույթի ամուր արմատները: Քրեական ենթամշակույթի առկայությունը քրեակատարողական հիմնարկներում ինստիտուցիոնալ մակարդակով փոխում է պատիժ կրող անձանց արժեքային համակարգը և գաղափարները, որոնք չեն համապատասխանում հասարակության համակեցության սոցիալական նորմերին և պետաիրավական կարգադրագրերին: Անձը, պատիժը կրելուց հետո, բնականաբար դուրս է գալիս պատիժ կատարող հիմնարկի տարածքի սահմաններից և շարունակում է ապրել լայն հասարակության միջավայրում, որտեղ պատիժ կրած անձը շարունակում է ապրել բանտային չգրված կաննոներով և գաղափարներով: Տեղին է հիշատակել «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ–ի զեկույցը առ այն, որ քրեակատարողական հիմնարկներում գործում է քրեական ենթամշակույթը, **«Կալանավայրերում կան «քրեական մշակույթի չգրված օրենքներ», որոնք նշանակություն են ունենում անձի վերաբերմունքի ձևավորմանը»**[13]: Հիշատակման է արժանի Իրավական նախաձեռնություններ հասարակական կազմակերպության կողմից կողմից պատրաստված զեկույցը առ այն, որ **բանտային քրեական մշակույթի առկայությունը, որը հաճախ փոխարինում է վարչակազմին և, ըստ այդմ, նաև քրեական կանոնները փոխարինում են նաև պաշտոնական կանոնակարգային հարաբերություններին և ավելի ազդեցիկ դեր են ունենում ներքին հարաբերությունների կարգավորման գործում, միևնույն ժամանակ ծնում են մի շարք նոր խնդիրներ և կոռուպցիոն ռիսկեր, քրեական ենթամշակույթի առկայությամբ պայմանավորված՝ կրկնահանցագործությունների թվի մեծացում և պատժի նպատակների ոչ արդյունավետ իրագործում, ինչպես նաև դատապարտյալների ուղղման և վերասոցիալականացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության նվազում**[14]: Վերը նշված փաստահավաք գործունեության արդյունքը իրենից ենթադրում է այն, որ քրեական օրենքը, առնվազն չի իրագործում իր դաստիրարկչական գործառույթը, իսկ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի նպատակները, այն է՝ սոցիալական արդարության վերականգնումը, անձի վերասոցիալականացումը և հանցագործությունների կանխումը դառնում են առարկայազուրկ և ինքնանպատակ:

Որպես այլ կարևոր պատճառ, պետք է նշել պետության իրավապահ մարմինների և դրանց ենթակառուցվածքների անկարողությունը և ոչ պատշաճ աշխատանքը, իրավապահ համակարգի թուլությունը նպաստում է քրեական ենթամշակույթի ծագմանը և զարգացմանը, բացի այդ սա մեծ հարված է պետության

[13] Տե՛ս Զեկույց:Մարդու իրավունքները բանակում և ազատրկման վայրերում, Երևան, 2019թ, էջ 37:

[14] Տե՛ս Զեկույց: Իրավական նախաձեռնությունների կենտրոն:

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խումբ–հաշվետվություն, Երևան, 2018 թ., էջ 7:

սահմանադրական կարգին, քանի որ տվյալ եղելությունը իրենից ենթադրում է հասարակության կողմից անվստահություն պետության նկատմամբ, այս իրավիճակը իդեալական հենարան է քրեական ենթամշակույթի զարգացման և ավելի լայն արմատներ գցելու համար, մարդկանց մոտ ստեղծվում է իրավունքի ժխտողական տրամադրություններ, մարդկանց համար օրենքը չի իրագործվում և մարդիկ իրենց խնդիրները լուծում են քրեական ենթամշակույթ կրող անձանց միջոցով: Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1–ին հոդվածի՝ *1.* ***Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է***[15]**:** Պետությունը այդ արարքը համարել է հանրորեն վտանգավոր և դրա վրա տարածել է քրեաիրավական արգելք: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 325–րդ հոդվածը սահմանում է՝ *1.* ***Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը՝ նրա անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով նյութական կամ ոչ նյութական օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքն իրականացնելու համար՝*** **. . . . . համապատասխան սանկցիա. . . .**[16]**:** Քրեական ենթամշակույթի առաջացման և տարածման համար կարևոր պատճառ է հանդիսանում զանգվածային լրատվամիջոցների, տարբեր ֆիլմերի, սերիալների, երգերի ստեղծումը և տարածումը: Ըստ Ա.Ռ.Բագաուտինովայի՝ քրեական ենթամշակույթի քարոզի գլխավոր զենքը մասս մեդիան է, որը գործում է երկրի մասշտաբով և հենց այդ ընտրությունը պատահական չէ, քանի որ մարդիկ մեծ վստահություն ունեն մասս մեդիայի մատուցած նյութերի հանդեպ: Պետության մեջ առավել լայն տարածում ունեցող զանգվածային լրատվամիջոցը դա հեռուստատեսությունն է, որպես զանգվածային լրատվամիջոցի մաս, այն ընդգրկում է ամբողջ երկիրը և բնակչությունը: Երկրի ծայրամասերում բնակվող անձանց համար հեռուստատեսությունը մնում է որպես միակ տեղեկատվության աղբյուր, իսկ դրա մեջի ֆիգուրանտները՝ որպես նմանեցման օբյեկտ:Վերջին տարիներին նկատվում է քրեական հերոսների ռոմանտիզացիա՝ ֆիլմերում և գեղարվեստական սերիալներում, որը կարող է դառնալ քրեական ենթամշակույթի դետերմինացիա, իհարկե, ֆիլմի դիտումը պարտադիր չի ինքնին բերի անձի քրեականացվելուն, դա պետք է համադրել այլ կոմպոնենտերի հետ[17]: Նման երևույթների առկայությունը ուժեղ աճ է հաղորդում քրեական ենթամշակույթի ստեղծման, զարգացման և տարածման համար, երևույթի վերլուծության համար այն պետք է ուսումնասիրել և տարանջատել կոմպոնենտները, ինչպես մասս մեդիայի գործողությունները, այնպես էլ դրանց պատճառահետևանքային կապը հասարակության գիտակցության վրա և դրանց հետևանքները:

---

[15] Տե՛ս ՀՀ Սահմանդրություն էջ 1:

[16] Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգիրք ՀՕ-199-Ն էջ 114–115:

[17] Տե՛ս А.Р.Багаутдинова Криминальная субкультура и масс медиа: Омск, Научный вестник Омской академии МВД России № 4 (31), 2008г., 2 с.

Կարելի է առանձնացնել հետևալ գործողությունները՝

▪ Շատ ֆիլմեր, հեռուստասերիալներ, գրքեր, երգեր հաճախ նկարագրում են հանցագործներին որպես հերոս և հակահերոս, որը կարող է ռոմանտիզացնել հանցավոր գործունությունը: Այդպիսի աշխատությունները կարող են ազդել հասարակության գիտակցության վրա, հատկապես՝ երիտասարդության, հանցավոր ապրելակերպը դարձնելով գրավիչ, անգամ ցանկալի:

▪ Մեդիայի աշխարհը՝ կլինի ֆիլմ, կլինի երգ, թե գրականություն, ցուցադրում է որոշակի վարքագիծ, որը հասարակության համապատասխան շերտի մոտ ընկալվում է որպես սովորական և ճիշտ ապրելակերպ:

▪ Մեդիան առանձին մշակույթ է և դրա՝ հանցավոր երևույթների ցուցադրումները կարող են նպաստել հանցավոր գործունեության նորմալիզացմանը, մարդիկ դրանք կարող են սկսել ընկալել նվազ վտանգավոր, անգամ՝ նորմալ:

▪ Որոշակի անհատներ կարող են իրենց ուղղակի նմանեցնել ֆիլմերի կամ սերիալների հերոսների, որը բերում է վարքագծի նմանության: Դա հատկապես ցայտուն կերպով կարող է արտահայտվել հանցավորության բարձր աստիճան ունեցող հասարակության շրջանում:

▪ Մեդիան կարող է ազդել հասարակության օրինականության և բարոյականության նկատմամբ ընկալման վրա, հաճախ ընդծելով իրավական համակարգի բացերը և սոցիալական համակարգի անարդարությունը: Դա կարող է առաջ քաշել դժգոհություններ և որոշ մարդկանց ներքաշել քրեական ենթամշակույթի մեջ, քրեական ենթամշակույթը կընկալվի որպես բողոք կամ ընդդիմության արտահայտություն:

▪ Մեդիան ունի մեծ ազդեցություն հանցավորության և հանցավոր արդարադատության մասին, որը իր հերթին կարող է ազդել քաղաքականության և օրենքների վրա, որը կարգավորում է հանցավորության դեմ պայքարը:

Այս եղանակներով մեդիան ազդեցություն է ունենում ոչ միայն քրեական ենթամշակույթի մասին հասարակական կարծիքի վրա, այլև հենց քրեական ենթամշակույթ ներկայացնող խմբավորումների և այդ ապրելաձևը կրող անձանց վրա:

Մոտ 2000–ական թվականներից Հայաստանի Հանրապետության մեդիան սկսեց ողողվել քրեական ենթամշակույթի թեմատիկա կրող սերիալներով և ֆիլմերով, դրա առաջին մեծ արտահայտությունը եղավ «Որոգայթ» քրեական հեռուստասերիալը, իսկ 2015 թվականին նկարահանվեց համանուն «Որոգայթ» ֆիլմը: Ժամանակագրական առումով, իրար հետևից լույս տեսան բազում քրեական հեռուստասերիալներ, մասնավորապես՝ «Էմմիգրանտներ», «Քավորը», որը ունի նմանություն ամերիկյան արտադրության երկու գործերի հետ՝ «Կնքահայրը», և «Կլան Սոպրանո», որտեղ ցուցադրվում է միգրացիայի ենթարկված անձանց քրեական կյանքը ԱՄՆ–ում, «Անմեղ մեղավորները», «Թշնամու անկողնում», «Ամերիկյան պատմություն», «Վերջնագիծը», «Երազանքների երկիր», «Վրիժառու», «Սարոյանները», «Վենդետա» և այլն: Հատկանշական է այն, որ 2023 թվականին նկարահանվեց «Սուրբը» վերնագրով քրեական դրաման, այն ունեցավ մեծ հաջողություն, սկսվեց երկրորդ եթերաշրջանի նկարահանումը,

այնուհետև նկարահանվեց «Տանդեմ» քրեական սերիալը, գրեթե նույն դերասանական կազմով, դա խոսում է հասարակության այդ տեսակ մեդիայի նկատմամբ պահանջի մասին և դա քրեական ենթամշակույթի գաղափարների տարածման համար լավ հենարան է, իսկ քրեական ֆիլմերի, սերիալների մեծ քանակի առկայությունը խոսում է հասարակության մեջ քրեական ենթամշակույթի տարածման մասին: Ամփոփելով վերոգրյալը՝ առաջանում է այն օբյեկտիվ համոզմունքը, որ քրեական ենթամշակույթի առաջացման պատճառները բազմապիսի են և ընգրկում են ինչպես տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական պատճառներ, այնպես էլ՝ հոգեբանական և էմոցիոնալ: Քրեական ենթամշակույթի դեմ ինստիտուցիոնալ և արդյունավետ պայքար ծավալելու համար անհրաժեշտ է կիրառել կոմպլեքս մեթոդներ և մոտեցումներ, ներառելով սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում, կրթական և իրազեկման ծրագրերի տարածում և դրանց արդյունավետ կիրառում, արդարադատության համակարգի շարունակական բարեփոխումները և պետական–հանրային ինստիտուտների հանդեպ հասարակական խմբերի վստահությունը: Տվյալ միջոցների կիրառումը, իհարկե, ամբողջությամբ չի ներառում բոլոր անհրաժեշտ գործիքակազմը, այն իրականում ավելի լայն է և նպատակահարմարության առումով դրանց պետք է հատկացնել ավելի լայն մեկնաբանություններ և դա ներկայացնել առանձին աշխատության տեսքով: Իհարկե, քրեական ենթամշակույթի դեմ կոմպլեքսային պայքարը պարտադիր չէ, որ լինի միանգամից և անմիջապես, բանն այն է, որ քրեական ենթամշակույթի առաջացման պատճառները ինքնին առանձին–առանձին վերցրած չեն կարող լուրջ ազդեցություն ունենալ դրա առաջացման կամ տարածման համար, դրանք իրար հետ կապված են դիալեկտիկական կապով, սրանք մի օրգանիզմի բաղկացուցիչ մասերն են և դրանով է պայմանավորված դրանց դեմ կոմպլեքսային պայքարի հրամայականը, վերացնել կամ նվազեցնել մեկ գործոնը, իհարկե, որոշակի արդյունք կտա, բայց ռազմավարական տեսանկյունից արդյունքը պետք է լինի երկարաժամկետ և ամրապնդված:

Գլուխ 3. Քրեական ենթամշակոիյթի դեմ պայքարը նոր իրավակարգավորումների և այլ միջոցներով

3.1. Գործող օրենսդրության վերլուծությունը

Քրեական ենթմաշույթի դեմ պայքարի արդյունավետ միջոցներից է ներպետական օրենսդրության զարգացումը: Պետության նորմատիվ բազան զարգացնելով՝ կստեղծվի անհրաժեշտ և ամուր նախադրյալներ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի համար: Նորմատիվ բազայի զարգացումը հանդիսանում է հիմնաքարային գործիք քրեական ենթամշակույթի դեմ պայքարի համար: Օրենսդրության բարելավումը թույլ է տալիս պետական ապարատին ապահովել և բարձր մակարդակի վրա պահել իրավակարգը, իջեցնել հանցավորության աստիճանը և կանխել քրեական–հանցավոր հանրույթների տարածումը: Հարկավոր է

վերլուծել գործող իրավակարգավորումները, որպեսզի հնարավոր լինի որոշել դրա արդյունավետությունը քրեական ենթամշակույթի դեմ պայքարում, մասնավորապես՝ նորմատիվային բովանդակությունը, այսինքն՝ ինչ ծավալով է գործող օրենսդրությունը ընդգրկում քրեական ենթամշակույթի և դրա տարրասեռ ենթակառուցվածքների հանցավոր գործունեությունը: Բացի տեսական վերլուծական գործունեությունից նորմերը պետք է գործնականորեն իրացվեն և դրանց բացերը վեր հանվեն: Օրենսդրական վերլուծությունից ավելի պարզ կդառնա իրավական համակարգի, որ ոլորտն է պետք է ենթարկել օրենսդրական փոփոխությունների, դա կարող է լինել, մասնավորապես՝ քրեական օրենսդրության անկատարությունը, կոնկրետ հանցակազմեր պարունակող հոդվածների բացակայությունը, որը կարող է վերաբերել նոր, ժամանակից հանցավոր գործունեության տեսակներին կամ անկատարությանը դատավարական օրենսդրության ոլորտում, որը կարող է դրսևորվել անհրաժեշտ արդյունավետ դատավարական գործիքակազմի բացակայությամբ: Անկյունաքարային ուղենիշը, ըստ մեր դիտակման՝ պետք է դնել քրեական օրենքի զարգացման ուղղությամբ, պետք է մշակել և ընդունել նոր քրեական նորմեր կամ փոփոխություններ կատարել գործող նորմերի մեջ, քրեականացնել որոշակի վարքագծի տեսակներ, որոնք քրեականացված չեն, միաժամանակ դրանց հետ մեկտեղ պետք է փոփոխություններ մշակվի պետության պատժի քաղաքականության մեջ, քրեական հանցանքի համար պատժի ինստիտուտի խստացումը, ըստ մեզ՝ կարող է խթան հանդիսանալ քրեական ենթամշակույթի տարածման և գոյության դեմ պայքարում:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի համար նորմատիվ բազան պետք է զարգացել քրեաիրավական ուղղությամբ, այսինքն՝ քրեական օրենքը պետք է իրացնի իր արգելիչ–պահպանիչ գործառույթը, օրենսդիր մարմինը պետք է քրեական օրենսգրքում կատարի համապատասխան փոփոխություն, նորմատիվ իրավական ակտում ամրագրելով նոր իրավակարգավորում, որից հետո քրեական օրենսգրքում կզետեղվի համապատասպան հանցակազմ նախատեսող հոդված, որը քրեաիրավական արգելք է քրեական ենթամշակույթի ստեղծման, փոփոխման և զարգացման համար: Քրեական ենթամշակույթի հետ կապված հոդվածները և դրանք սահմանող հանցակազմների օբյեկտը ընգրկում է այն հասարակական հարաբերությունները, որոնք պաշտպանում են հասարակական անվտանգությունը, այդ հանցանքները ուղղված են հասարակական անվտանգության պահպանման դեմ: Անհրաժեշտ է օրակարգում ներառել նաև քրեական ենթամշակույթ քարոզող գործողությունների դեմ քրեաիրավական պայքարի անհրաժեշտության կամ դրա բացակայության հարցը:Համադրելով նախորդ գլուխներում նշված քրեական ենթամշակույթի տարածման մեջ զանգվածային մեդիայի դերը՝ հատկապես ֆիլմերի, սերիալների գալիս ենք ողջամիտ եզրակացության, որ պետք է քրեական ենթամշակույթի քարոզը հասարակության շրջանակներում դարձնել պարսավելի արարք, դրան հաղորդել հանրային վտանգավորություն, պետք է արարքը քրեականացնել, այսինք՝ նախատեսել քրեական օրենսգրքի հատուկ մասում, որպես պատժի սպառնալիքով նախատեսված արարք, հիրավի,

քարոզը, հատկապես՝ մասս մեդիայի միջոցով, հանդիսանում է հզորագույն գործիք քրեական ենթամշակույթի տարածման համար և հաշվի առնելով ժամանակակից թվային տեխնոլոգիաների բուռն զարգացումը՝ տարածման գործընթացը ստանում է երկրաչափական պրոգրեսիայի արագություն և դառնում անկառավարելի: Ըստ մեր դիտարկման՝ անհրաժեշտ է քրեականացնել քրեական ենթամշակույթը քարոզելուն ուղղված արարքները՝

Կլինի ողջամիտ քրեական օրենսգրքի 12–րդ բաժնի (Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները), 34–րդ գլխում զետեղել հետևալ համարով, վերնագրով և բովանդակությամբ հոդված՝

Հոդված 323.1. Քրեական ենթամշակույթ քարոզելը

1. Քարոզելը՝ անձի կողմից, քրեական ենթամշակույթ կրող գաղափարներ, սիմվոլիսիկա, կանոններ, գրքեր, կենսագրություններ, երգեր, ֆիլմեր, հեռուստա-սերիալներ, տեսահոլովակներ և քրեական ենթամշակույթ կրող և դրան անդչվող այլ ձևի և տեսակի նյութական կամ ոչ նյութական առարկաներ ցանկացած ձևով տարածելը, գովազդելը, ցուցադրելը,[18]

պատժվում է (...):

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) պաշտոնատար անձի կողմից,

2) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,

3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

4) զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից,

5) անչափահասների շրջանում կամ ներգրավմամբ

պատժվում է (...):

3. Սույն գլխի իմաստով՝ քրեական ենթամշակույթ (գողական աշխարհ) է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց ապրելակերպը և գաղափարախոսու-թյունը, որոնք գործում են իրենց սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին և, որոնց նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

[18] Ընդ որում, հարկ է մանրամասնել, որ քարոզելու միջոցների (օրինակ՝ գիրք, կանոն, ֆիլմ և այլն) մեջ չեն ներառվում այն աշխատատությունները կամ ձևերը, որոնք կրում են գիտագործական բնույթ, օրինակ՝ քրեական ենթամշկույթին վերաբերող հանցագործությունների որակման մասին դասագիրք, որտեղ կարող է խոսվել, թե՞ որ արարքն է համընկնում նշված հոդվածով նախատեսված հանցակազմին:

Վերը նշված քրեական հոդվածը չի հանդիսանում մասնագիտական իրավաստեղծ գործունեություն, այլ հանդիսանում է մեր ուսումնասիրության և գիտական դիտարկումների արտահայտությունը:

Իհարկե, տվյալ արարքի քրեականացումը և քրեական օրենսգրքում տվյալ հանցակազմը նախատեսելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը մեր մասնավոր կարծիքն է, սակայն այն կազմված է օբյեկտիվ և սուբյեկտիվ որոշակի գործոններից, որոնց մասում խոսվեց նախորդ գլուխներում:

3.2. Իրավապահ մարմինների աշխատանքների զարգացում

Քրեական ենթամշակույթի տարածման դեմ պայքարի կարևոր գործոն է իրավապահ մարմինների աշխատանքի ուժեղացումը, որը ներառում է իրավապահ մարմինների աշխատակիցների որակավորման բարձրացում, հաշվի առնելով ժամանակակից տենդենցները, ինչպիսիք են կիբեռհանցավորությունը և անդրազգային հանցավոր գործունեությունը: Ոչ պակաս կարևոր է ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը, ինչպիսիք են տվյալների վերլուծությունը, տեսահսկման համակարգերը, արհեստական բանականությունը և բիոմետրիական տեխնոլոգիաները, տվյալ գործունեությունը կատարող հատուկ ստորաբաժանումների ստեղծում և զարգացում: Քրեական ենթամշակույթի դեմ պայքարը, բացի օրենսդրական փոփոխություններից, պետք է դիտարկել սոցիալական և ռեաբիլիտացիոն ծրագրերի համատեքստում, դպրոցներում և համալսարաններում այնպիսի կրթական ծրագրերի ներդնումը, որը ուղղված է երիտասարդության մեջ հանցավորության նախականխմանը: Պետք է զարգացվեն հասարակության առավել խոցելի խմբերին սոցիալական և հոգեբանական օգնության տրամադրումը, պատիժը կրած անձանց համար վերասոցիալականցման և վերաինտեգրման ծրագրեր իրականացնելիս նոր և ժամանակակից մեթոդներ ներդնել:

Ըստ մեր դիտարկման՝ քրեական ենթամշակույթի դեմ պայքարում հատուկ ուշադրության է արժանի դրա լատենտայնության բնույթը և դրան նպաստող պատճառների վեր հանումը: Լատենտայնությունը ներառում է երկու դրույթ՝ քողարկված հանցանքներ և քողարկվող հանցանքներ: Քողարկված հանցանքները ձևավորվում է տարբեր հանցանքների ամբողջությունից, որոնց մասին իրապահան համակարգը չի իմացել, օրինակ՝ տուժողը հաղորդում չի ներկայացրել, ականատեսը չի ահազանգել: Ի տարբերություն քողարկված հանցանքների՝ քողարկվող հանցանքների մասին իրապահ մարմինները տեղեկացել են և սկսել են համապատասխան գործընթացը, բայց ապացուցման գործընթացը պատշաճ տեղի չի ունենում մի շարք պատճառներով, օրինակ՝ ականատեսները չեն ցանկանում ցուցմունք տալ, կամ դեպքի վերաբերյալ տեղեկություն ունեցող անձը չի ցանկանում համագործակցել վարույթ իրականացնող մարմինների հետ[19]: Վարույթին ներգրավված անձինք չեն ցանկանում մասնակցել քրեական ենթամշակույթին առնչվող առերևույթ հանցանքների քննության ընթացքում ապացուցողական գործողություններին, մասնավորապես՝ խուսափում են ցուցմունք տալուց,

[19] Տե՛ս Криминология: А.И.Долговой, Москва, 1997, էջ 134–135.

չեն մատնանշում այն անձանց, որոնց մասին ունեն տեղեկություն, ոչ մի ձև չեն ցանկանում քրեական վարույթի ընթացքին, որևէ ձև մասնակցել: Վերը նշված բացասական երևույթները ունեն, ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ, հաճախ հանդիպում են դեպքեր, երբ անձը կամ անձինք հրաժարվում են ցուցմունք տալ, քանի որ ուղղակի վախենում են, իրենց և իրենց մտերիմների, հարազատների կյանքի կամ առողջության կամ այլ շահերի համար: Օրենսդիր մարմնի կողմից սահմանվել են քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանության ուղղված միջոցառումների իրավակարգավորումները: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 73–85–ը[20] սահմանում է հատուկ պաշտպանության միջոցների իրավական կարգավորումները, ընդհանուր առմամբ Կառավարության կողմից 2022 թվականի ապրիլի 22-ի ընդունված N 560-Ն[21] որոշումը բավականաչափ ձևով նախատեսում է պաշտպանության արդյունավետ միջոցներ: Ըստ մեր դիտարկման՝ օրակարգում պետք առաջադրվի սույն ոլորտը զարգացնելու և համապատասխանեցնելու մերօրյա մարտահրավերների հարցը: Կարևորագույն ասպեկտներից, որը արժանի է հիշատակման, դա իրավական մշակույթի զարգացվածության աստիճանն է, իրավական մշակույթի կառուցման գլխավոր տարրը՝ իրավագիտակցությունը, որը ներառում է մարդկանց պատկերացումները գործող իրավական նորմերի մասին (պոզիտիվ իրավունք), և գոյություն ունեցող իրավական երևույթների մասին՝ իրավաստեղծ, իրավակիրառ գործունեությունների մասին, իրավահարաբերությունների մասին, իրավաբանական պատասխանատվության մասին և այլն[22]: Իրավագիտակցության ոչ ճիշտ տեսակը կամ դրա ցածր լինելը արդեն, իսկ անձին դարձնում է պոտենցիալ դելիկտունակ (իրավախախտ): Անձի մոտ առաջանում է սխալ պատկերացում՝ իրավունքի, պետության և առհասարակ դրա իշխանության մարմինների և իրավակարգի մասին: Այդ ամենի նվազեցումը արդյունավետ կլինի քրեական ենթամշակույթի անկառավարելի տարածման դեմ պայքարում: Անհրաժեշտ է բարձրացել հասարակության իրավական կրթական մակարդակը, պետք է զարգացնել իրազեկման ծրագրերը, ըստ մեր դիտարկման՝ ողջամիտ կլինի հասարակության մասսայական իրազեկման ծրագրերի ներդրումը, այսինքն՝ հարկավոր է հասարակական վայրերում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով կպցնել որոշակի նկարազարդված նյութեր, որոնք կպարունակեն որոշակի նկարային պատկերներ քրեական օրենսգրքի հոդվածների մասին, նյութը պետք է պատրաստված լինի այն կանխավարկածով, որ հասարակության այն զանգվածը, որը չունի իրավաբանական կրթություն կարողանա մատչելի կերպով հասկանա, թե ինչ է ցուցադրված և ինչ նպատակով: Տվյալ մեթոդը կլինի արդյունավետ և մարդկանց գիտակցության վրա կունենա բարենպաստ հետևանք, այդ նյութը մշտապես պետք է լինի մարդկանց դիմաց և լինի մատչելի, բացի վերը նշվածից՝ մեթոդը

[20] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք ՀՕ–306–Ն էջ 35–38:

[21] Տե՛ս ՀՀ Կառավարության N-560 Ն որոշում:

[22] Տե՛ս Юрковский А. В., Евдокимов К. Н., Деревскова В. М., Кузьмин И. А: Теория государства и права–Учебное пособие Иркутск, 2016, էջ 479:

ողջամիտ կլինի նաև նույն իրազեկման գործողությունը կատարել համացանցային հավելվածների և զանգվածային լրատվության միջոցներով: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ դա արդյունավետ միջոց է, ցույց տանք մի քանի երկրների փորձը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու–Յորք քաղաքի մետրոպոլիտեն-ների պատերի վրա փակցված են նկարազարդված նյութեր, որոնց բովանդա-կությունը կազմում է իրազեկման տարրեր, օրինակ՝ չի կարելի արագ մեքենա վարել, չի կարելի պատերին ներկ թափել, գողություն կատարելու համար նախա-տեսված պատժի մասին և այլն: Նույն մեթոդով իրազեկման աշխատանքներ է կատարվում դպրոցներում և համալսարաններում: Նմանտիպ աշխատանքներ մասսայական եղանակով կատարվում են Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Նիդերլանդներում, Ճապոնիայում, Հարավային Կորեայում և այլ երկրներում: Տվյալ դեպքում իրազեկումը պետք է կատարվի քրեական ենթամշակույթին վերա-բերվող թեմաների մասին, դրա անկառավարելի տարածման և հանրային մեծ վտանգավորության մասին: Ամփոփելով վերը շարադրվածը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ հանցավորության նախականխումը լավագույն միջոցն է հանցավորության դեմ պայքարելու համար: Կոմպլեքսային մոտեցումը, որը իր մեջ ներառում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային համագործակցություն, այն հանդիսանում է արդյունավետ եղանակ քրեական ենթամշակույթի տարած-ման դեմ պայքարում, երկրում իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացման և իրավակարգի ամրապնդման համար:

Եզրակացություն

Ամփոփելով վերը շարադրվածը և սույն աշխատանքի շրջանակներում կատար-ված ուսումնասիրություններն ու հետազոտությունները՝ կատարել ենք մի շարք եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք ներկայացված են ստորև.

Ի տարբերություն նախկին 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենս-գրքի, որում առկա չէր քրեական ենթամշակույթը կարգավորող համապատաս-խան հանցակազմներ պարունակող հոդվածներ, գործող՝ 01.07.2022 թվականին ընդուված քրեական օրենսգիրքը նախատեսեց մի շարք հոդվածներ, ըստ որի, քրեաիրավական արգելք դրվեց քրեական ենթամշակույթին վերաբերող և առնչվող արարքների վրա, դրանք դարձնելով հանցավոր և հաղորդելով բարձր հանրային վտանգավորություն, գիտական վերլուծություններից զատ՝ դրանց հանրային բարձր վտանգավորության մասին կարելի է եզրահանգել նորմա-տիվային բազայից ելնելով առ այն, որ քրեական օրենսգրքի 322–րդ հոդվածի (Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը) հիմնական հանցակազմով նախատեսված հան-ցանքը իր տեսակով համարվում է առանձնապես ծանր հանցանք, սույն օրենսգրքի 323–րդ հոդվածի (քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղ-ծելը կամ ղեկավարելը) հիմնական հանցակազմով նախատեսված հանցանքը իր տեսակով ծանր է, իսկ սույն հոդվածի 2–րդ մասը՝ առանձնապես ծանր, 324–րդ հոդվածի (Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներ-

գրավելը) ևս 1–ին և 2-րդ մասերը համարվում են ծանր հանցանքներ, իսկ 3–րդ մասը՝ առանձնապես ծանր, հատկանշական է, որ 325–րդ հոդվածի (Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը) հանցակազմով նախատեսված հանցանքը, ըստ տեսակի՝ համարվում է միջին ծանրության հանցանք, որի հետ համաձայն չենք, քանի որ այն հանդիսանում է քրեական ենթամշակույթի տարածմանը և ամրապնդմանը ուղղված հանցանք և այն դասելը միջին ծանրության հանցանքների շարքին կարծում ենք չի համապատասխանում համաչափության սկզբունքին և արհեստականորեն նվազեցվում է դրա հանրային վտանգավորությունը:Քրեական օրենսգրքի համակարգային վերլուծությունից ելնելով, կարելի պնդել, որ քրեական ենթամշակույթի դեմ նորմատիվիստական պայքարը գտնվում է բարձր մակարդակում, դրա մասին վկայում է նաև այն, որ օրենսդիրը պատժից ազատելու ինստիտուտի կիրառման համար սահմանել է նաև քրեական ենթամշակույթի հանդեպ ունեցած անձի վերաբերմունքը, ըստ քրեական օրենսգրքի 85–րդ հոդվածի (Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը) 3–րդ մասի՝ (3.Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները), 6-րդ կետը՝ քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը), այսինքն՝ դատարանը անձի վերասոցիալականցման հավանականությունը գնահատելիս, պարզում է նաև նրա վերաբերմունքը քրեական ենթամշակույթին, որի առկայությունը առանց պատիժը կրելու վերասոցիալականացման հավանականությունը նվազեցնում է, իսկ դրա բացակայությունը՝ բարձրացնում: Վերլուծելով սույն հոդվածի կարգավորումը, մեզ համար անհասկանալի է, թե՞ ինչու այս կետը չի նախատեսվել պատժի նշանակումը կարգավորող ինստիտուտի հոդվածների շարքում: Ըստ մեզ՝ ողջամիտ կլինի քրեական օրենսգրքի 71–րդ հոդվածը (Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքները) ենթարկել փոփոխության և ավելացնել (քրեական ենթամշակույթի հանդեպ ունեցած վերաբերմունքը) կետը: Նկատի ունենալով, որ նորմատիվ բազան բավականին հարուստ իրավակարգավորումներ ունի և առաջնորդվելով իրավունքի դինամիզմի սկզբունքով առ այն, որ իրավունքի նորմերը պետք է փոխվեն կյանքին զուգընթաց առաջարկվում է քրեական օրենսգրքում զետեղել քրեական ենթամշակույք քարոզելը վերնագրով հոդվածը, որի նորմատիվ կառուցվածքը զետեղված է 3–րդ գլխի 3.1 ենթագլխում, իսկ ոչ նորմատիվիստական մոտեցման տեսանկյունից մեր կողմից առաջարկվում է բարձրացնել հասարակական իրավական իրազեկման մակարդակը, որի մասին մանրամասն խոսվել է սույն գլխի 3.2 ենթագլխում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն
The Constitution of the Republic of Armenia
2. ՀՀ Քրեական օրենսգիրք ՀՕ-199-Ն
Criminal Code of the Republic of Armenia HO-199-N
3. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք ՀՕ-306-Ն
Criminal Procedure code of the Republic of Armenia HO-306-N
4. Կառավարության որոշում–N 560-Ն
Government of decision- N 560-N
5. Гуров А. И. Профессиональная преступность: прошлое и современность–Москва.,1990. – 304 с
Gurov A.I. Professional crime: past and present, Moscow, 1999. – 304 pages
6. Корецкий Д. А. Криминальная субкультура и ее криминологическое значение / Д. А. Корецкий, В. В. Тулегенов. – Санкт-Петербург:Юридический центр Пресс, 2006. – 243 с
A. Koreckii, V.V. Tulegenov-Criminal subculture and its criminological significance Legal Centre Press: St Petersburg, 2006. – 243 pages
7. Дубягина О. П. Криминологическая характеристика норм, обычаев и средств коммуникации криминальной среды : монография / Мосва: Юрлитинформ, 2008г., 204 с.
Dubyagina O. P. Criminological characterization of norms, customs and means of communication of criminal environment: a monograph / O. P. Dubyagina .- Moscow : Yurlitinform, 2008. - 204 pages
8. Ա.Ղամբարյան, Մ.Մուրադյան. Պետության և իրավունքի տեսություն, Երևան, <<Լուսաբաց>> հրտ. 2023թ.,475 էջ
A.Ghambaryan, M.Muradyan, Theory of state and law, Erevan, <<Lusabac>> press. 2023, 475 pages
9. В. В. Тулегенов. Криминальная субкултура: Понятие, структура и соотношение со смежиними понятиями:Статья/Астрахан/ Астраханский государственный технический университет, 5 с.
B. V. Tulegenov Criminal Subculture: Concept, Structure and relationship with related concepts Article/Astrakhan/Astrakhan State Technical University, 5 p.
10. Ռ.Մուսայելյան, Ա.Հայրապետյան. Քրեական աշխարհի ժարգոն և դաջվածքներ. Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2015թ., 100 էջ
R.Musayelyan, A.Hayrapetyan.Slangs and tattoos of criminal world, Yerevan, Author Publishing, 2015, 100 page
11. Կ.Ա.Բիշարյան, Ս.Վ.Առաքելյան, Ա.Հ.Գաբուզյան.ՀՀ Արդարադատության ակադեմիա: Քրեական ենթամշակույթին առնվող արարքների քրեաիրավական բնութագիրը, Երևան, 46 էջ
Justice Academy of RA: Legal definition of actions relating to criminal subculture, K.A.Bisharyan,

S .V.Araqelyan, A.H.Gabuzyan, Yerevan, 46 pages

12.ՄԻԵԴ Աշլարբան ընդդեմ Վրանստանի գանգատ՝ 45554/08

ECHR Ashlarban vs. Georgia appeal 45554/08

13. Пирожков В.Ф. Законы преступного мира молодежи. (криминальная субкультура) Тверь, 1994, 315 с.

V.F.Pirozkov. Laws of junior criminal world (criminal subculture), Tver, 315 pages 1994.

14. Why Do People Commit Crimes? (Nine Reasons)-Official web page of Alliant International University

https://www.alliant.edu/blog/why-do-people-commit-crimes

Access 21/09/2023

15. Զեկույց:Մարդու իրավունքները բանակում և ազատրկման վայրերում, Երևան, 2019թ. 38 էջ

Report:Human rights in the army and in places of imprisonement pages, Erevan, 2019թ., page 38

16. Տե՛ս Զեկույց: Իրավական նախաձեռնությունների կենտրոն: ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խումբ–հաշվետվություն–Երևան, 2018 թ., 141 էջ

Centre for Legal Initiatives

Report of the group of observers exercising public control in penitentiary institutions and bodies of the Ministry of Justice of the Republic of Armenia–Erevan, 2018 թ., 141 pages

17. А.Р.Багаутдинова Криминальная субкультура и масс медиа:Омск, Научный вестник Омской академии МВД России № 4 (31), 2008г., 3 с.

A.R.Bagautdinova Criminal Subculture and Mass Media: Omsk, Scientific Bulletin of the Omsk Academy of the Ministry of Internal Affairs of Russia № 4 (31), 2008, 3 p., 3 pp.

18. Криминология: А.И.Долговой, Москва, 1997, 779 с.

Criminology: A.I.Dolgovoy 1997 Moscow, 1997, 779 p.

19. Юрковский А. В., Евдокимов К. Н., Деревскова В. М., Кузьмин И. А:Теория государства и права–Учебное пособие Иркутск, 2016, 619 стр.

Yurkovsky A. V., Evdokimov K. N., Derevskova V. M., Kuzmin I. A. Theory of law and state-Study Guide Irkutsk, 2016. 619 page

Artur Gharagyozyan
Graduate of the Academy of Justice of the Republic of Armenia,
Attendee of the Academy of Advocates of the Republic of Armenia

THE REASONS FOR THE FORMATION OF CRIMINAL SUBCULTURE AND MODERN MEANS OF COMBATING IT[23]

Abstract

Currently, there is a high degree of criminal subculture in the Republic of Armenia, unlike the previous norms of the Criminal Code adopted on 01.08.2003, where there are no articles on criminalization of acts related to criminal subculture, the Criminal Code. The Code, adopted and in force since 01.07.2022, has envisaged 4 articles providing for criminal offences related to subculture (arts. 322-324).

In this novel approach of the law, it is obvious that criminal subculture and its uncontrolled spread are phenomena of high public danger, and a legislative and regulatory fight against them is planned. It should be noted, however, that the establishment of criminal prohibitions alone is not sufficient for the criminal law to fulfil its preventive function.

Criminal subculture has a high degree of latency, as people avoid reporting its existence to law enforcement agencies; there are many reasons for this silence, but the most persistent reason is personal safety, with which the person alerting law enforcement agencies may have problems. The most dangerous phenomenon is the uncontrolled spread and growth of criminal subculture and its propaganda.

The aim of the work is to systematically analyze the social phenomenon of criminal subculture, to highlight the existing problems in the discussed sphere, as well as to present criminal groups belonging to criminal subculture defined by the current Criminal Code of the Republic of Armenia. To study and highlight the means of combating criminal subculture individually and by complex means and to make new effective recommendations.

Keywords: criminal subculture; propaganda; prevention; activity; complex struggle; normative struggle.

[23] The article was presented on 30.09.2024 and was reviewed on 16.05.2025.

Артур Карагезян
Выпускник Академии юстиции Республики Армения,
студент Академии адвокатов Республики Армения

ПРИЧИНЫ ВОЗНИКНОВЕНИЯ КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРЫ И СОВРЕМЕННЫЕ СРЕДСТВА БОРЬБЫ С НЕЙ[24]

Абстракт

В настоящее время в Республике Армения наблюдается высокая степень криминальной субкультуры, в отличие от предыдущих норм Уголовного кодекса, принятых 01.08.2003, где отсутствуют статьи о криминализации деяний, связанных с криминальной субкультурой, Уголовный кодекс. Кодекс, принятый и действующий с 01.07.2022, предусмотрел 4 статьи, предусматривающие уголовные преступления, связанные с субкультурой (ст. 322-324)

При этом новелле подход закона очевиден, что криминальная субкультура и ее неконтролируемое распространение являются явлениями высокой общественной опасности, а также планируется законодательно-нормативная борьба с ними. При этом следует отметить, что только установления уголовных запретов недостаточно для того, чтобы уголовный закон выполнял свою превентивную функцию.

Криминальная субкультура имеет высокую степень латентности, поскольку люди избегают сообщать о ее существовании правоохранительным органам, у такого молчания есть множество причин, но наиболее устойчивой причиной является личная безопасность, с которой у человека, предупреждающего правоохранительные органы, могут возникнуть проблемы. Самым опасным явлением является неконтролируемое распространение и рост криминальной субкультуры, ее пропаганда.

Цель работы - системно проанализировать социальный феномен криминальной субкультуры, осветить существующие проблемы в обсуждаемой сфере, а также представить преступные группировки, относящиеся к криминальной субкультуре, определенные действующим Уголовным кодексом республики. Армении и выступить с новыми рекомендациями, изучить и осветить средства борьбы с криминальной субкультурой индивидуально, комплексными средствами и выступить с новыми эффективными рекомендациями.

Ключевые слова: криминальная субкультура; пропаганда; профилактика; деятельность; комплексная борьба; нормативистская борьба.

---

[24] Статья была представлена 30.09.2024 и прошла рецензирование 16.05.2025.